EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՄԽԻԹԱՐՅԱՆԸ ԵՎ ԱՅԼՔ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(գանգատ թիվ 4693/12 եւ 3 այլ գանգատներ. տե՛ս կից ցանկը)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

23 հունիսի 2022թ.

Սույն վճիռը վերջնական է, սակայն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Մխիթարյանը եւ այլք ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Չորրորդ բաժանմունք), հանդես գալով Կոմիտեի հետեւյալ կազմով՝

Յոլիեն Շուկինգ [Jolien Schukking]՝ *Նախագահ,*

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Անա Մարիա Գեռա Մարտինս [Ana Maria Guerra Martins]՝ *դատավորներ*,

եւ Վիկտորիա Մարադուդինա [Viktoriya Maradudina]՝ *Բաժանմունքի քարտուղարի տեղակալի պաշտոնակատար*,

2022 թվականի հունիսի 2-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն ընդդեմ Հայաստանի՝ կից աղյուսակում նշված տարբեր ամսաթվերի Դատարան ներկայացված գանգատների հիման վրա։

2. Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Կառավարություն) ծանուցվել է գանգատների մասին։

ՓԱՍՏԵՐԸ

3. Դիմումատուների ցանկը եւ գանգատների համապատասխան մանրամասները ներկայացված են կից աղյուսակում։

4. Դիմումատուները բողոք են ներկայացրել անօրինական կալանքի վերաբերյալ։ Որոշ դիմումատուներ նաեւ այլ բողոքներ են ներկայացրել Կոնվենցիայի դրույթների համաձայն։

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԳԱՆԳԱՏՆԵՐԻ ՄԻԱՑՈՒՄԸ

5. Հաշվի առնելով գանգատների առարկայի համանմանությունը՝ Դատարանը նպատակահարմար է գտնում դրանք քննել համատեղ՝ մեկ վճռում։

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

6. Դիմումատուները բողոք են ներկայացրել անօրինական կալանքի վերաբերյալ (լրացուցիչ մանրամասների համար տե՛ս կից աղյուսակը)։ Նրանք հստակորեն կամ ըստ էության հիմնվել են Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի վրա, որն ունի հետեւյալ բովանդակությունը.

Հոդված 5, կետ 1

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության եւ անձնական անձեռնմխելիության իրավունք։ Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետեւյալ դեպքերում եւ օրենքով սահմանված կարգով.

...

գ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,»։

7. Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխանելու համար խնդրո առարկա կալանավորումը պետք է տեղի ունենա «օրենքով սահմանված կարգով» եւ լինի «օրինական»։ Կոնվենցիան, ըստ էության, սույն փաստաթղթում հղում է կատարում ներպետական իրավունքին եւ ամրագրում այդ իրավունքի նյութաիրավական եւ

ընթացակարգային նորմերը պահպանելու պարտավորությունը, սակայն ի հավելումն պահանջում է, որ ազատազրկման ցանկացած դեպք պետք է ուղղված լինի 5-րդ հոդվածի նպատակը պահպանելուն, այն է՝ անհատին կամայականությունից պաշտպանելուն (տե՛ս՝ *Ասանիձեն ընդդեմ Վրաստանի* [ՄՊ] [*Assanidze v. Georgia* [GC]], թիվ 71503/01, § 171, ՄԻԵԴ 2004-II, *Հաչիսոն Ռիդն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Hutchison Reid v. the United Kingdom*], թիվ 50272/99, § 47, ՄԻԵԴ 2003-IV, եւ *Վասենինն ընդդեմ Ռուսաստանի* [*Vasenin v. Russia*], թիվ 48023/06, § 108, 2016 թվականի հունիսի 21)։ Երկարաժամկետ կալանքը թույլատրող իրենց որոշումներում դատական մարմինների կողմից տրված որեւէ հիմքի բացակայություն կարող է անհամատեղելի լինել 5-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված՝ կամայականությունից պաշտպանության սկզբունքի հետ (տե՛ս՝ *Ստաշայտիսն ընդդեմ Լիտվայի* [*Stašaitis v. Lithuania*], թիվ 47679/99, § 67, 2002 թվականի մարտի 21, *Նախմանովիչն ընդդեմ Ռուսաստանի* [*Nakhmanovich v. Russia*], թիվ 55669/00, § 70, 2006 թվականի մարտի 2, եւ *Ելոյեւն ընդդեմ Ուկրաինայի* [*Yeloyev v. Ukraine*], թիվ 17283/02, § 54, 2008 թվականի նոյեմբերի 6)։

8. *Վարդան Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի* [*Vardan Martirosyan v. Armenia*] (թիվ 13610/11, 2021 թվականի հունիսի 15) նախադեպային գործում Դատարանն արդեն խախտում է հայտնաբերել սույն գործում առկա համանման հարցերի առնչությամբ։

9. Ուսումնասիրելով իրեն ներկայացված բոլոր նյութերը եւ կողմերի փաստարկները, այդ թվում՝ Կառավարության՝ իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու մասին առարկությունը՝ Դատարանը չի հայտնաբերել սույն բողոքների ընդունելիության կամ էության վերաբերյալ այլ եզրակացության հանգելու համար համոզիչ փաստեր կամ փաստարկներ։ Հաշվի առնելով թեմայի վերաբերյալ իր նախադեպային իրավունքը՝ Դատարանը համարում է, որ ներկայիս գործում ներպետական դատարանների որոշումները, ինչպես նշված է կից աղյուսակում, դիմումատուներին չեն ընձեռել կամայականությունից պատշաճ պաշտպանության հնարավորություն, որը Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով կալանքի անօրինականության

կարեւոր տարր է, ուստի դիմումատուների կալանքը, ինչպես նշված է կից աղյուսակում, չի համապատասխանել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին։

10. Հետեւաբար սույն բողոքներն ընդունելի են, եւ դրանցով բացահայտվում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում։

III. ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՄՅՈՒՍ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

11. Որոշ դիմումատուներ ներկայացրել են այլ բողոքներ, որոնցով նույնպես Կոնվենցիայի համաձայն հարցեր են բարձրացվել՝ հաշվի առնելով Դատարանի համապատասխան ձեւավորված նախադեպային իրավունքը (տե՛ս կից աղյուսակը)։ Դատարանը, ուսումնասիրելով իրեն ներկայացված բոլոր նյութերը եւ կողմերի փաստարկները, գտնում է, որ սույն բողոքները Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով ո՛չ ակնհայտորեն անհիմն են, ո՛չ էլ անընդունելի որեւէ այլ հիմքով։ Ըստ այդմ, դրանք պետք է հայտարարվեն ընդունելի։ Դատարանը, ուսումնասիրելով իր մոտ առկա բոլոր նյութերը, եզրակացնում է, որ դրանցով նաեւ բացահայտվում են Կոնվենցիայի խախտումներ՝ *Բուզաջին ընդդեմ Մոլդովայի Հանրապետության* [ՄՊ] [*Buzadji v. the Republic of Moldova*] [GC] (թիվ 23755/07, §§ 84 եւ հաջորդող մասեր, 2016 թվականի հուլիսի 5), *Արա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի* [*Ara Harutyunyan v. Armenia*] (թիվ 629/11, §§ 48 եւ հաջորդող մասեր, 2016 թվականի հոկտեմբերի 20) եւ *Խոդորկովսկին ընդդեմ Ռուսաստանի* [*Khodorkovskiy v. Russia*] (թիվ 5829/04, § 235, 2011 թվականի մայիսի 31) գործերով եզրակացությունների լույսի ներքո։

IV. ՄՆԱՑԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԸ

12. Որոշ գանգատներում դիմումատուները ներկայացրել են նաեւ այլ բողոքներ՝ համաձայն Կոնվենցիայի տարբեր հոդվածների։

13. Մասնավորապես թիվ 45189/18 գանգատում դիմումատուն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն բողոք է ներկայացրել նաեւ 2018 թվականի մարտի 16-ին ազատ արձակելու մասին նրա դիմումը մերժելիս գործը քննող դատարանի կողմից կալանավորման համար հիմնավոր եւ բավարար պատճառներ չներկայացնելու վերաբերյալ։ Հաշվի առնելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն իր եզրակացությունները եւ դիմումատուի խնդրո առարկա կալանքի ժամկետը՝ Դատարանը համարում է, որ սույն բողոքն ընդունելի է, սակայն չկա դրա վերաբերյալ առանձին որոշում կայացնելու անհրաժեշտություն։

14. Թիվ 4693/12 եւ 5728/17 գանգատներում դիմումատուները նաեւ այլ բողոքներ են ներկայացրել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն։

15. Դատարանը քննել է սույն բողոքները եւ հաշվի առնելով իր տրամադրության տակ առկա բոլոր նյութերը, եւ այնքանով, որքանով բողոքի հիմքում ընկած հարցերի քննությունն իր իրավասության սահմաններում է, գտնում է, որ կա՛մ դրանք չեն համապատասխանում Կոնվենցիայի 34-րդ եւ 35-րդ հոդվածներով սահմանված ընդունելիության չափանիշներին, կա՛մ դրանցով չի բացահայտվում Կոնվենցիայով կամ դրան կից արձանագրություններով ամրագրված իրավունքների եւ ազատությունների խախտման որեւէ հատկանիշ։

Այստեղից հետեւում է, որ այդ բողոքները պետք է մերժվեն՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան։

V. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

16. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

> «Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»։

17. Հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած փաստաթղթերը եւ իր նախադեպային իրավունքը՝ Դատարանը ողջամիտ է համարում շնորհել կից աղյուսակում նշված գումարները եւ մերժում է դիմումատուների կողմից թիվ 4693/12, 5728/17 եւ 45189/18 գանգատներում ներկայացված՝ արդարացի փոխհատուցման որեւէ լրացուցիչ պահանջ։ Ինչ վերաբերում է թիվ 39583/17 գանգատի դիմումատուին, ապա Դատարանը ոչինչ չի շնորհում, քանի որ նա սահմանված ժամկետում չի ներկայացրել արդարացի փոխհատուցման իր պահանջները, ինչպես պահանջվում է Դատարանի կանոնակարգի 60-րդ կանոնով։

18. Դատարանն այնուհետեւ նպատակահարմար է գտնում, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ։

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ՝

1. *Որոշում է* միացնել գանգատները.

2. *Հայտարարում է* անօրինական կալանավորման վերաբերյալ բողոքները, ինչպես նկարագրված է կից աղյուսակում, Դատարանի ձեւավորված նախադեպային իրավունքի համաձայն ներկայացված մյուս բողոքները, ինչպես նշված է կից աղյուսակում, եւ թիվ 45189/18 գանգատում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն ներկայացված բողոքն ընդունելի, իսկ թիվ 4693/12 եւ 5728/17 գանգատներում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն

դիմումատուների ներկայացրած բողոքների մնացած մասը՝ անընդունելի.

3. *Վճռում է,* որ սույն բողոքներով բացահայտվում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ կապված անօրինական կալանքի հետ, ինչպես նշված է կից աղյուսակում.

4. *Վճռում է,* որ Դատարանի ձեւավորված նախադեպային իրավունքի համաձայն ներկայացված մյուս բողոքների մասով տեղի է ունեցել Կոնվենցիայի խախտում (տե՛ս կից աղյուսակը).

5. *Վճռում է,* որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն թիվ 45189/18 գանգատում ներկայացված բողոքն առանձին քննելու անհրաժեշտություն չկա.

6. *Վճռում է, որ* ՝

ա) պատասխանող պետությունը երեք ամսվա ընթացքում պետք է թիվ 4693/12, 5728/17 եւ 45189/18 գանգատների դիմումատուներին վճարի կից ներկայացված աղյուսակում նշված գումարները, որոնք պետք է փոխարկվեն պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով,

բ) վերոնշյալ եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի կողմից սահմանված՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ։

7. *Մերժում է* թիվ 4693/12, 5728/17 եւ 45189/18 գանգատներում դիմումատուների արդարացի փոխհատուցման պահանջների մնացած մասը։

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2022 թվականի հունիսի 23-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ

3-րդ կետերի։

Վիկտորիա Մարադուդինա՝	Յոլիեն Շուկինգ՝
Քարտուղարի տեղակալի պաշտոնակատար	Նախագահ

ՀԱՎԵԼՎԱԾ

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ներկայացված բողոքներ պարունակող գանգատների ցանկը (անօրինական կալանք)

Թիվ	Գանգատ թիվ Ներկայացման ամսաթիվը	Դիմումատուի անունը Ծննդյան ամսաթիվը	Ներկայացուցչի անունն ու գտնվելու վայրը	Անօրինական կալանքի ժամկետը	Կալանքի մասին որոշումը կայացրած դատարանը	Հատուկ թերությունները	Չեւավորված նախադեպային իրավունքի համաձայն ներկայացված մյուս բողոքները	Ցուրաքանչյուր դիմումատուի ոչ նյութական վնասի համար շնորհվող գումարը (եվրոյով)[1]	Ցուրաքանչյուր գանգատի մասով ծախսերի եւ ծախքերի համար շնորհվող գումարը (եվրոյով)[2]
1.	4693/12 2012 թվականի հունվարի 14	**Սերգեյ ՄԽԻԹԱՐՅԱՆ** 1991թ.	Սիմոնյան Լիպարիտ Երեւան	2011 թվականի ապրիլի 26-ից 2012 թվականի ապրիլի 13	Շիրակի մարզային դատարան 2011 թվականի ապրիլի 26-ին	Կալանավորման, անժամկետ կալանքի որոշման մեջ դատարանի կողմից տրված հիմքերի բացակայությունը		6,000	չի շնորհվել
2.	5728/17 2016 թվականի նոյեմբերի 21	**Արթուր ՎԱՐԴԱՆՅԱՆ** 1981թ.	Աղվանյան Սիրուշ Երեւան	2016 թվականի նոյեմբերի 24-ից 2019 թվականի սեպտեմբերի 13	Երեւանի Կենտրոն եւ Նորք- Մարաշ վարչական շրջանների դատարան 2016 թվականի նոյեմբերի 24-ին	Կալանավորման, անժամկետ կալանքի որոշման մեջ դատարանի կողմից տրված հիմքերի բացակայությունը	5-րդ հոդվածի 3-րդ կետ՝ կալանավորման համար հիմնավոր եւ բավարար պատճառների բացակայություն 2015 թվականի նոյեմբերի 25-ից 2016 թվականի նոյեմբերի 24 (տե՛ս Բուզաջին ընդդեմ Մոլդովայի	6,000	1,500

[1] Գումարած դիմումատուներից գանձման ենթակա ցանկացած հարկ:
[2] Գումարած դիմումատուներից գանձման ենթակա ցանկացած հարկ:

Թիվ	Գանգատ թիվ Ներկայացման ամսաթիվը	Դիմումատուի անունը Ծննդյան ամսաթիվը	Ներկայացուցչի անունն ու գտնվելու վայրը	Անօրինական կալանքի ժամկետը	Կալանքի մասին որոշումը կայացրած դատարանը	Հատուկ թերությունները	Ձեւավորված նախադեպային իրավունքի համաձայն ներկայացված մյուս բողոքները	Ցուրաքանչյուր դիմումատուի ոչ նյութական վնասի համար շնորհվող գումարը (եվրոյով)[1]	Ցուրաքանչյուր գանգատի մասով ծախսերի եւ ծախքերի համար շնորհվող գումարը (եվրոյով)[2]
							Հանրապետության [ՄՊ], [Buzadji v. the Republic of Moldova [GC]], թիվ 23755/07, §§ 84 եւ հաջորդող մասեր, 2016 թվականի հուլիսի 5, եւ Արա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի [Ara Harutyunyan v. Armenia], թիվ 629/11, §§ 48 եւ հաջորդող մասեր, 2016 թվականի հոկտեմբերի 20) 5-րդ հոդվածի 4-րդ կետ՝ կալանավորման օրինականության վերանայման վարույթում առկա թերությունները, 2016 թվականի նոյեմբերի 24-ի դատական նիստում անձամբ կամ ներկայացուցչության որոշակի ձեւի միջոցով լսվելու իրավունք (տե՛ս Խոդորկովսկին		

Թիվ	Գանգատ թիվ Ներկայացման ամսաթիվը	Դիմումատուի անունը Ծննդյան ամսաթիվը	Ներկայացուցչի անունն ու գտնվելու վայրը	Անօրինական կալանքի ժամկետը	Կալանքի մասին որոշումը կայացրած դատարանը	Հատուկ թերությունները	Ձեւավորված նախադեպային իրավունքի համաձայն ներկայացված մյուս բողոքները	Ցուրաքանչյուր դիմումատուի ոչ նյութական վնասի համար շնորհվող գումարը (եվրոյով)[1]	Ցուրաքանչյուր գանգատի մասով ծախսերի եւ ծախքերի համար շնորհվող գումարը (եվրոյով)[2]
							ընդդեմ Ռուսաստանի [Khodorkovskiy v. Russia], թիվ 5829/04, § 235, 2011 թվականի մայիսի 31)		
3.	39583/17 2017 թվականի մայիսի 23	**Խաչիկ ԱՎԵՏԻՍՅԱՆ** 1960թ.	Պողոսյան Սյուզաննա Ստրասբուրգ	2016 թվականի նոյեմբերի 24. դիմումատուի դատապարտման կամ ազատ արձակման օրն անհայտ է	Երեւանի Կենտրոն եւ Նորք- Մարաշ վարչական շրջանների դատարան, 2016 թվականի նոյեմբերի 24-ին	Կալանավորման, անժամկետ կալանքի որոշման մեջ դատարանի կողմից տրված հիմքերի բացակայությունը	5-րդ հոդվածի 4-րդ կետ՝ կալանավորման օրինականության վերանայման վարույթում առկա թերությունները, 2016 թվականի նոյեմբերի 24-ի դատական նիստում անձամբ կամ ներկայացուցչության որոշակի ձեւի միջոցով լսվելու իրավունք (տե՛ս Խոդորկովսկին ընդդեմ Ռուսաստանի [Khodorkovskiy v Russia], թիվ 5829/04, § 235, 2011 թվականի մայիսի 31)	չի շնորհվել	չի շնորհվել
4.	45189/18 2018 թվականի սեպտեմբերի 16	**Հարություն ՍԱՐԻԲԵԿՅԱՆ** 1967թ.	Ռշտունի Նարինե Երեւան	2016 թվականի նոյեմբերի 24-ից 2018 թվականի	Երեւանի Կենտրոն եւ Նորք- Մարաշ վարչական	Կալանավորման, անժամկետ կալանքի որոշման մեջ դատարանի		6,000	չի շնորհվել

ՄԽԻԹԱՐՅԱՆԸ ԵՎ ԱՅԼՔ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ

Թիվ	Գանգատ թիվ Ներկայացման ամսաթիվը	Դիմումատուի անունը Ծննդյան ամսաթիվը	Ներկայացուցչի անունն ու գտնվելու վայրը	Անօրինական կալանքի ժամկետը	Կալանքի մասին որոշումը կայացրած դատարանը	Հատուկ թերությունները	Չեւավորված նախադեպային իրավունքի համաձայն ներկայացված մյուս բողոքները	Ցուրաքանչյուր դիմումատուի ոչ նյութական վնասի համար շնորհվող գումարը (եվրոյով)[1]	Ցուրաքանչյուր գանգատի մասով ծախսերի եւ ծախքերի համար շնորհվող գումարը (եվրոյով)[2]
				հունիսի 22	շրջանների դատարան, 2016 թվականի նոյեմբերի 24-ին	կողմից տրված հիմքերի բացակայությունը			